ՀԱՎԵԼՎԱԾ 1

ԶԲԱՂՄՈՒՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Պաշտոնի (զբաղմունքի) անվանումը	Հողաշինարար
Դ ե ր ը	Կազմակերպել և/կամ կառավարել հողաշինարարական աշխատանքները գյուղացիական տնտեսություններում, ձեռնարկություններում, շինարարական կազմակերպություններում կամ դրանց ստորաբաժանումներում: Ապահովել վերոշարադրյալ հիմնարկություններում տարբեր ստորաբաժանումների միջև սերտ համագործակցություն՝ ուղղված հողաշինարարական աշխատանքների արդյունավետ և որակյալ կազմակերպմանը՝ յուրաքանչյուր որոշարկված դեպքում հաշվի առնելով հիմնարկության ներքին հնարավորությունները, աշխատանքային պայմանների առանձնահատկությունները, տեխնիկական ու տեխնոլոգիական հագեցվածությունը, ինչպես նաև մարդկային ռեսուրսների որակական հատկանիշները: Վերահսկել ամենօրյա աշխատանքները, հերթափոխի գրաֆիկները, անվտանգության կանոնների և առողջապահական չափանիշների պահպանումը, հարկ եղած դեպքում հանդես գալ արդյունավետ խորհրդատվությամբ:
<u>Խնդիրների բնագավառ 1.</u>	Աշխատանքների կազմակերպում և կառավարում
Աշխատանքային գործընթացը	• մշակում է աշխատանքային ընթացիկ և հեռանկարային ծրագրեր, • նախապատրաստում և կազմակերպում է հողաշինարարական կազմակերպությունների ստորաբաժանումների աշխատանքը, • հսկում է իրեն ենթակա ստորաբաժանման աշխատակիցների աշխատանքային գործունեությունն ու կարգապահությունը, • մշակում է աշխատանքային մեթոդների և ձևերի նորացմանն ու կատարելագործմանն ուղղորդված ռազմավարական գործառույթներ.
Կատարման չափանիշները	• կազմված են աշխատանքային ընթացիկ և հեռանկարային ծրագրերը, • ճիշտ է կազմակերպված հողաշինարարական կազմակերպության ստորաբաժանումների աշխատանքային գործընթացը, • համապատասխան հանձնարարականները ձևակերպված են հստակ և հասկանալի, • ճիշտ են բաշխված աշխատանքային ռեսուրսներն ու ժամանակը, • ճիշտ են ներկայացված աշխատանքային նորարարական մեթոդները, • աշխատանքն իրականացված է համաձայն ծրագրված պայմանների և ժամանակի.
<u>Խնդիրների բնագավառ 2.</u>	Որակի հսկում
Աշխատանքային գործընթացը	• հսկողություն է սահմանում աշխատանքների կազմակերպման մեթոդների և տեխնոլոգիաների նկատմամբ, • հաշվարկում և աշխատանքներ է կատարում համապատասխան քանակությամբ աշխատանքային մեքենաներ, սարքավորումներ և գործիքներ , ինչպես նաև հարակից այլ նյութեր ձեռք բերելու համար, • վերահսկում է աշխատանքային պայմանների և աշխատատեղերի սանիտարահիգիենիկ նորմերը, մեքենա-սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները , իրականացնում է վերահսկում աշխատողների և նրանց կատարած աշխատանքի արդյունքների նկատմամբ.
Կատարման չափանիշները	• պահպանված են աշխատատեղերի սանիտարական նորմերը, • ձեռք են բերված անհրաժեշտ մեքենաները, սարքավորոումներն ու աշխատանքային գործիքները, • ապահովված են աշխատանքային պայմանների հիգիենայի նորմերը ,

	• ապահովված են աշխատանքային պայմանների և մեքենա - սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները .
Խնդիրների բնագավառ 3.	**Նախագծում**
Աշխատանքային գործընթացը	• կազմակերպում է նախագծման նախապատրաստական աշխատանքներ, • կատարում է հողաշինարարական նախնական գծագրեր, • ապահովում է հողաշինարարական նախագծերի կազմման պայմանները, նյութերն ու գործիքները, • ձևավորում է ներհամայնքային հողաշինարարական նախագծերը, • ձևավորում է միջհամայնքային հողաշինարարական նախագծերը, • կատարում է գյուղական բնակավայրերի և տեղական նշանակության ճանապարհների նախագծումներ.
Կատարման չափանիշները	• ձեռնարկված են նախագծման նախապատրաստական միջոցառումները, • կատարված են հողաշինարարական բնույթի նախնական գծագրերը, • ապահովված են հողաշինարարական նախագծերի կազմման նյութերն ու գործիքները, • ձևավորված են ներհամայնքային և միջհամայնքային հողաշինարարական նախագծերը, • կազմված են գյուղական բնակավայրերի և տեղական նշանակության ճանապարհների նախագծերը.
Խնդիրների բնագավառ 4.	**Աշխատանքային ռեսուրսների կառավարում**
Աշխատանքային գործընթացը	• պատրաստում և վերահսկում է աշխատակիցների աշխատանքային գրաֆիկը, • կատարում է աշխատանքի բաժանում, • սահմանում է աշխատակիցների աշխատավարձերն՝ ըստ օրենքով ընդունված կարգի և դրույքաչափերի, • կազմում է հաստիքների ցանկը, • իրականացնում է աշխատակազմի խրախուսման միջոցառումներ, • օժանդակում է աշխատակիցների վերապատրաստմանը, • ջանում է ապահովել առողջ աշխատանքային միջավայր.
Կատարման չափանիշները	• ճիշտ է կազմված աշխատակիցների աշխատանքային գրաֆիկը, • ճիշտ և արդարացի է կատարված աշխատանքի բաժանումը, • աշխատավարձերը սահմանված են աշխատանքային օրենսդրության տառին և ոգուն համապատասխան, • աշխատանքային կոնֆլիկտները ստանում են ճիշտ լուծումներ.
Խնդիրների բնագավառ 5 .	**Տեղանքի գեոդեզիական հանույթ**
Աշխատանքային գործընթացը	• թեոդոլիտը բերում է աշխատանքային վիճակի, • կատարում է տեղանքի թեոդոլիտային հանույթ, • տախիոմետրը բերում է աշխատանքային վիճակի, • կատարում է տեղանքի տախիոմետրական հանույթ, • նիվելիրը բերում է աշխատանքային վիճակի, • կատարում է նիվելիրացման աշխատանքներ, • կազմում է տեղանքի հատակագիծ.
Կատարման չափանիշները	• թեոդոլիտը ճիշտ է բերված աշխատանքային վիճակի, • տեղանքի թեոդոլիտային հանույթը կատարված է ճիշտ, • տախիոմետրը ճիշտ է բերված աշխատանքային վիճակի, • տեղանքի տախիոմետրական հանույթը կատարված է ճիշտ, • տեղանքի նիվելիրացման աշխատանքները կատարված են ճիշտ, • տեղանքի հատակագիծը կազմված է անհրաժեշտ բոլոր մանրամասնություններով.

Խնդիրների բնագավառ 6 .	Հողերի կադաստրում
Աշխատանքային գործընթացը	• հողօգտագործման գրանցում, • հողի քանակական հաշվառում, • հողի որակական հաշվառում, • հողերի որակական գնահատում, • հողերի տնտեսական գնահատում.
Կատարման չափանիշները	• հողօգագործման գրանցումները կատարված են ճիշտ, • որոշված են հողի քանակական բնութագրիչները և կատարված է համապատասխան հաշվառում, • որոշված են հողի որակական բնութագրիչները և կատարված է համապատասխան հաշվառում, • ճիշտ է տրվում հողի որակական գնահատականը, • ճիշտ է տրվում հողի տնտեսական գնահատականը.
Խնդիրների բնագավառ 7.	Հողային ռեսուրսների պահպանում
Աշխատանքային գործընթացը	• հողերի պահպանում հողատարումից, • հողերի աղակալման դեմ տարվող պաշտպանական միջոցառումների ձեռնարկում, • հողերի աղտոտման վերաբերյալ արձանագրությունների կազմում, • հողերի ճահճակալումը կանխող միջոցառումների մշակում.
Կատարման չափանիշները	• մշակված է բազմամյա տնկարկների ցանկը, • կատարված է հողերի ճիշտ դարավանդեցում, • հողերի աղտոտման դեպքերի համար կազմված են ճիշտ արձնագրություններ.
Պատասխանատվությունը և բարդության աստիճանը	
Բարդության աստիճանը	Մ ի ջ ի ն
Պատասխանատվությունը	Հողաշինարարը պատասխանատու է հողաշինարարական աշխատանքների կազմակերպման, գեոդեզիական աշխատանքների իրականացման, հողային հարաբերությունների կարգավորման, միասնական պետական հողային կադաստրի վարման, հողային ռեսուրսների պահպանման, հողերի բարելավման միջոցառումների համակարգման և տարեկան հողային հաշվեկշիռ կազմելու հարցերում:
Մասնագիտական գիտելիքներ, կարողություններ, հմտություններ և վերաբերմունք	
Լեզուները	• Հայերեն՝ գերազանց, • Ռուսերեն՝ լավ, • Երկրորդ օտար լեզու՝ բավարար.
Համակարգիչը	• MS Word՝ լավ, • MS Excel՝ լավ, • MS Auto Cad՝ լավ.
Գիտելիքը	• Վարչարարություն. • Կառավարում. • Ծրագրավորում. • Նախագծում. • Քարտեզագրում. • Հաշվառում. • Վերահսկում. • Աշխատակազմ և մարդկային ռեսուրսներ. • Մաթեմատիկա. • Կրթություն և վերապատրաստում.
Կարողությունները, հմտությունները և վերաբերմունքը	• Գործարարության դրսևորում. • Մենեջմենթի իմացություն. • Մոնիթորինգի իրականացում.

	• Օրենսդրական դաշտի բավարար տիրապետում. • ՈՒսուցում և սովորեցնելու ընդունակություն. • Անկաշկանդվածություն. • Աշխատաժամանակի հաշվենկատ կառավարում. • Թիմային աշխատանքի ղեկավարում. • Աշխատակիցների հոգեբանական կերտվածքի ճիշտ ընկալում. • Խորհրդատվության ցուցաբերում. • Նորարարական առաջարկությունների հստակ ձևակերպում և իրականացում.

ՀԱՎԵԼՎԱԾ 2

«ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ՏԵԽՆԻԿ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՇՆՈՐՀՄԱՆ՝ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Մասնագետի «Հողաշինարարություն» մասնագիտության «տեխնիկ» որակավորման շնորհման՝ մասնագիտական գիտելիքների և կարողությունների գնահատման չափանիշներն են.

1.համապատասխան պետական կրթական (որակավորման) չափորոշչի բոլոր մոդուլների ուսումնառության արդյունքներով սահմանված մասնագիտական գիտելիքները, որոնց ստուգումն իրականացվում է հարց ու պատասխանի կամ համալիր թեսթային հարցման միջոցով: Թեսթը բաղկացած է վերոնշյալ բոլոր ուսումնառության արդյունքներին վերաբերող նյութերից՝ ընդհանուրը 20 հարցից: Արդյունքը համարվում է բավարար, եթե ճիշտ պատասխաններ են տրվել թեսթային առաջադրանքի հարցերի առնվազն 95% - ին:

2.մասնագիտական կարողությունները, որոնց ստուգման համար պահանջվում է առաջադրված կոնկրետ տարածքի օրինակով կազմել հողօգտագործման և հողաշինարարական նախագիծ՝ մեկ - երկու շաբաթվա ընթացքում կատարելով ստորև նշված գործողությունները.

- կազմել տվյալ տեղանքի խոշորամասշտաբ քարտեզագրական հիմքը.
- քարտեզագրական հիմքի վրա անցկացնել տեղանքի ջրագրական ցանցը.
- քարտեզագրական հիմքի վրա տարանջատել գյուղատնտեսական հողահանդակները.
- քատեզագրական հիմքի վրա եզրագծել և գունաներկել վարելահողերը, խոտհարքերը, բազմամյա տնկարկներն ու արոտավայրերը.
- քարտեզագրական հիմքի վրա պատկերել գյուղական բնակավայրերի տեղաբաշխումը.
- քարտեզագրական հիմքի վրա անցկացնել տեղական նշանակության ճանապարհները.
- գնահատել տվյալ տեղանքի հողային ռեսուրսները.
- գնահատել տվյալ տեղանքի հողօգտագործման ներկայիս վիճակը.
- գնահատել տվյալ տեղանքի հողօգտագործման հեռանկարները.
- վերլուծել տվյալ տեղանքի հողօգտագործման արդյունավետությունը:

Արդյունքը համարվում է բավարար, եթե վորոնշյալ գործողությունների առնվազն 90% - ը կատարվել է չափորոշիչներով նախատեսված չափանիշներին համապատասխան՝ պահպանելով աշխատանքի անվտանգության և հիգիենայի կանոններն ու նորմ: